Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվություն տրամադրելու մասին

Համառոտ

2019 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտնում «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ-ում գործատուի կողմից օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվության ձեռքբերման պահանջը: Օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2016 թ. մայիսի 12-ի թիվ 493-Ն որոշմամբ:

Օտարերկրացիների աշխատանքը ՀՀ-ում

Գործատուներն իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր կամ ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքել միայն աշխատանքի թույլտվության հիման վրա (բացառությամբ հաջորդ պարբերությունում նշված դեպքերի):

Առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունքը

ՀՀ-ում առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեն մասնավորապես.

- ՀՀ մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողները.
- ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները՝ որոշակի

ժամկետով և հիմքերի առկայության դեպքում.
- ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք.
- ՀՀ-ում ուսումնական հաստատություններում դասախոսություններ կարդալու նպատակով հրավիրված դասախոսները.
- Լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները.
- Փախստականի կարգավիճակ ունեցող, ՀՀ-ում քաղաքական ապաստան ստացած օտարերկրացիները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.
- Համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում աշխատանք կատարող ուսանողները և այլն:

Աշխատանքի թույլտվության ստացման կարգը

Գործատուն օտարերկրացու աշխատանքի համար թույլտվություն կարող է ստանալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ «Նախարարություն») միայն այն դեպքում, երբ Նախարարությունը գործատուի պահանջներին համապատասխանող ՀՀ քաղաքացու թեկնածություն չի առաջարկում կամ վերջինս մերժում է առաջադրված թեկնածուին:

Աշխատանքի թույլտվություն ստանալու նպատակով ներկայացվող փաստաթղթերի ցանկը

- Դիմում,
- Օտարերկրացու անձնագիրը,
- Օտարերկրացու ստացած մասնագիտական կրթության, որակավորման մասին փաստաթղթերը՝ հյուպատոսական վավերացմամբ կամ ապոստիլով հաստատված.
- Օտարերկրացու 3x4 չափի մեկ գունավոր լուսանկար,
- 25,000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Նախարարության կողմից աշխատանքի թույլտվության տրամադրման ժամկետները

- Նախարարությունը աշխատանքի թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին որոշումը ընդունում է գործատուի կողմից վերը նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում:
- Վերը նշված փաստաթղթերն ամբողջական չներկայացնելու և (կամ) դրանք թերություններով ներկայացնելու դեպքերում, Նախարարությունը **մեկ** աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է գործատուին:
- Աշխատանքի թույլտվությունը կամ աշխատանքի թույլտվության մերժման մասին գրավոր ծանուցումը գործատուին տրամադրվում է որոշումն ընդունելուց հետո **երեք** աշխատանքային օրվա ընթացքում:
- Գործատուն կարող է աշխատանքի թույլտվության մերժումը մերժման պահից **հինգ** օրվա ընթացքում բողոքարկել դատական կարգով:
- Գործատուն աշխատանքի թույլտվություն տրամադրելու մասին տեղեկատվությունն ստանալուց հետո **երեք** աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է օտարերկրացուն: Այնուհետև օտարերկրացին համապատասխան փաստաթղթեր է ներկայացնում ՀՀ ոստիկանություն՝ ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար:

Աշխատանքի թույլտվության տրամադրման մերժումը

Աշխատանքի թույլտվություն տրամադրելը մերժվում է, եթե՝
- Հայաստանի աշխատաշուկայի վիճակը նախարարության

վերլուծության հիման վրա թույլ չի տալիս այդ աշխատանքը,
- Տվյալ աշխատանքը կատարելու համար ՀՀ օրենքներով պահանջվում է ՀՀ քաղաքացիություն,
- Պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը կեղծված են,
- Գործատուն, որի մոտ պետք է աշխատի տվյալ օտարերկրացին, նախկինում խախտել է օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու պահանջները,
- Գոյություն ունեն ՀՀ պետական անվտանգությանն սպառնացող պատճառներ:

Աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

- Գործատուն աշխատանքի թույլտվությունը ձեռք է բերել կեղծիքով:
- Գործատուն Պայմանագիր չի կնքել աշխատանքի թույլտվություն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Աշխատանքի թույլտվության գործողությունը դադարում է եթե՝

Լրացել է Պայմանագրի ժամկետը կամ Պայմանագիրը լուծվել է:

Գործատուն հատուցում է օտարերկրացու որոշ ծախսերը, եթե՝

Աշխատանքի թույլտվություն ստանալուց մեկ ամսվա ընթացքում օտարերկրացու հետ չի կնքում Պայմանագիր և նրան չի ապահովում աշխատանքով:

Տուգանք օրենքի պահանջը խախտելու համար

Գործատուների կողմից առանց համապատասխան կացության կարգավիճակի կամ աշխատանքի թույլտվության օտարերկրացիներին աշխատանքի ընդունելն առաջացնում է վարչական տուգանքի նշանակում 100,000-150,000 ՀՀ դրամի չափով:

Աշխատանքի թույլտվությունը կանոնակարգող նորմերի հսկողությունն ու վերահսկողությունն իրականացնող մարմիններն են.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

Եկեք խոսենք

Մանրամասների համար, թե ինչպես կարող են ազդել սույն փոփոխությունները ձեր բիզնեսի վրա, դուք կարող եք կապ հաստատել մեզ հետ՝

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հարկային և իրավաբանական ծառայություններ, Հայաստան

Հասմիկ Հարությունյան
+(374) 10 51 21 66
hasmik.harutyunyan@pwc.com

Մայքլ Ահերն
+7 (727) 330 32 00
michael.ahern@pwc.com

© 2018 «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն փաստաթղթում «PwC» ասելով հասկանում ենք «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն, որը «ՓրայսուոթերհաուսԿուպերս Ինթերնեյշնլ Լիմիթիդ» համաշխարհային ցանցի անդամ ընկերություններից է, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է առանձին իրավաբանական անձ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվությունը տրամադրվում է բացառապես քննարկվող առարկայի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով: Այն չպետք է օգտագործվի փոխարինելու մասնագիտական հաշվապահական, հարկային, իրավաբանական կամ այլ խորհրդատուներին: Սույն փաստաթուղթը PwC ընկերության կողմից նախատեսված կամ պատրաստված չէ օգտագործման համար և չի կարող օգտագործվել հարկ վճարողի նկատմամբ կիրառվող հարկային պատժամիջոցներից խուսափելու նպատակով: Նախքան որևէ որոշում կայացնելը կամ ցանկացած գործողություն կատարելն անհրաժեշտ է խորհրդակցել PwC ընկերության մասնագետների հետ: Մենք որևէ երաշխիք չենք տալիս սույն հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվության ճշտության վերաբերյալ, ինչպես նաև ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում ցանկացած հաշվետվության կամ եզրակացության համար կամ որևէ սխալի կամ բացթողման համար: